



ASIAN DEVELOPMENT BANK

Հայաստան. Հանրային արդյունավետության ու ֆինանսական շուկաների ծրագիր, Ենթածրագիր 1

Ծրագրի անվանումը	Հանրային արդյունավետության ու ֆինանսական շուկաների ծրագիր, Ենթածրագիր 1	
Ծրագրի համարը	51060-002	
Երկիրը	Հայաստան	
Ծրագրի կարգավիճակը	Առաջարկված	
Ծրագրի տեսակը/ աջակցության եղանակը	Վարկ	
Ֆինանսավորման աղբյուրը / Գումարը	Վարկ. Հանրային արդյունավետության ու ֆինանսական շուկաների ծրագիր, Ենթածրագիր 1	
	Սովորական կապիտալ ռեսուրսներ	\$ 90.00 միլիոն ԱՄՆ դոլար
Ռազմավարական նպատակները	Ներառական տնտեսական աճ	
Փոփոխություն շարժիչ ուժերը	Կառավարում և կարողությունների զարգացում Գործընկերություններ Մասնավոր հատվածի զարգացում	
Ոլորտ / Ենթաօլորտ	Ֆինանսներ` ֆինանսական ոլորտի զարգացում, փողի և կապիտալի շուկաներ	
	Հանրային հատվածի կառավարում` Պետական ծախսեր և ֆիսկալ կառավարում	
Գենդերային հավասարություն և խթանում	Գենդերային տարրեր չկան:	

Նկարագրություն

Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների առաջարկվող ծրագիրը նպատակ ունի ուժեղացնել Հայաստանի ֆիսկալ կայունությունը և խթանել ֆինանսական շուկաները: Ծրագիրը կհզորացնի պետական պարտքի և ֆիսկալ ռիսկերի կառավարումը, կխորացնի պետական արժեթղթերի շուկան և փողի շուկայի ենթակառուցվածքը, կընդլայնի ներդրողների բազան և կավելացնի կորպորատիվ թափանցիկությունը: Ծրագրային մոտեցումը և քաղաքականության վրա հիմնված վարկը կսատարեն 2017 – 2018թթ. ը ն թ ա գ ք ու մ ի ր ա կ ան ա գ վ ո ղ երկու ենթածրագրերի: Կտրամադրվի գործառնական տեխնիկական աջակցություն (ԳՏԱ):

Ծրագրի հիմնավորվածությունը և կապը երկրի/տարածաշրջանային ռազմավարության հետ

Ռուսաստանի Դաշնությունում տնտեսական անկումը 2016թ. -ին շարունակեց ներազդել Հայաստանի տնտեսության աճի վրա ֆինանսական, առևտրային և դրամական փոխանցումների միջոցով: Աճը զգալիորեն դանդաղեց՝ 2015թ. -ի 3.0%-ից հասնելով 0.2%-ի 2016թ. -ին: Այս բացասական ճնշումները հանգեցրին հարկաբյուրեղացման և պակասունդի ավելացմանը՝ 2015թ. -ին ՀՆԱ-ի նկատմամբ գրանցված 4.8%-ից 2016թ. -ին հասնելով 5.4% և զգալի հետագա պարտքերի կուտակման մինչև ՀՆԱ-ի նկատմամբ 57.0%, ի տարբերություն 2015թ. -ի 48.8% ցուցանիշի: Հարկաբյուրեղացումն այս կարգավիճակի և արտարժույթով պետական պարտքի գերակշռության արդյունքում պետական պարտքը կանգնած է փոխարժեքի տատանումներով պայմանավորված ռիսկերի առջև: Պարտքի առումով այսպիսի խոցելիությունը նվազեցնելու և ֆիսկալ ռիսկերը սահմանափակելու համար նախատեսվում է զգալիորեն նվազեցնել բյուջեի պակասուրդը 2017թ. -ին այն հասնելով ՀՆԱ-ի 2.8%, հիմնականում կապիտալ ծախսերի կրճատումների և աշխատավարձերի և պետական կենսաթոշակների զսպման միջոցով: Հայաստանն, այնուամենայնիվ, կանգնած է ֆիսկալ պատասխանատվության մարտահրավերի առջև՝ տնտեսական աճի դանդաղ տեմպերի և ծախսերի լրացուցիչ կրճատումների սահմանափակ ծավալների ֆոնին: Տարածաշրջանում տնտեսական դանդաղման և ընդհանուր պետական

պարտքի՝ ՀՆԱ-ի 50%-ը գերազանցող ցուցանիշների պարագայում հարկաբյուջետային կոնսոլիդացիայի մյուս փուլը պետք է հիմնված կլինի ներքին եկամուտների մոբիլիզացման և պետական ծախսերի արդյունավետության վրա:

Ներկա տնտեսական միջավայրը նաև դժվարություններ է ստեղծում երկրի ֆինանսական համակարգի համար: Արժույթի արժեզրկման ակնկալիքները հաշվարկվում են ֆինանսական պայմանագրերի արժեքներում և մեծացնում վճարունակության ռիսկերի ընկալումը: Տնտեսական աճի դանդաղումը մեծացնում է վարկային ռիսկը: Մեծացող արտասահմանյան ներհոսքերը, փոխարժեքի ցուցանիշների զարգացումները և կապիտալի թերզարգացած շուկաները կարևոր դեր խաղացին համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո դոլարիզացիայի աճի համար: Քանի որ տեղական արժույթով ֆինանսական շուկաները զարգացած չեն, ֆինանսական ոլորտին բնորոշ են դոլարիզացիայի բարձր մակարդակը և հանրային ու մասնավոր հատվածների կողմից ներդրումների համար հայկական դրամով երկարաժամկետ ֆինանսավորման սահմանափակ մոբիլիզացումը: Բանկերի ակտիվների և պարտավորությունների ֆինանսական դոլարիզացիան բանկերին ենթարկում է փոխարժեքի տատանումների և վերաֆինանսավորման ռիսկերի: Հայկական դրամի սահմանափակ օգտագործմամբ, թե հարկաբյուջետային, թե դրամավարկային քաղաքականություններում շատ քիչ մանրեղու տեղ կա՝ հաղթահարելու արտաքին մակրոտնտեսական ցնցումները և ապահովելու ֆինանսական կայունությունը: Հետևաբար, փոխարժեքի դերակատարությունը մակրոտնտեսական և ֆինանսական կայունության համար շարունակում է լինել մտահոգության տեղիք տվող առանցքային առարկա արտաքին ցնցումների ժամանակ: Հայկական դրամով ֆինանսական միջամտության խորացումը այսպիսով առաջնահերթ կարևորություն է ստանում:

չափվում է Ֆինանսական ոլորտի զարգացման
ցուցիչով)

Ծրագրի վերջնարդյունքը

Ֆինանսական շուկաների խորության ավելացում

Ծրագրի արդյունքները

1. Պետական պարտքի և ֆիսկալ ռիսկերի կառավարման հզորացում
2. Պետական արժեթղթերի շուկայի և փողի շուկայի ենթակառուցվածքների խորացում
3. Գործիքների և ներդրողների բազայի ընդլայնում

Աշխարհագրական տեղակայումը

Երաշխիքների կարգերը

Շրջակա միջավայր

C

Հարկադիր տարաբնակեցում

C

Տեղաբնիկներ

C

Բնապահպանական և սոցիալական գործոնների ամփոփագիր

Բնապահպանական գործոններ

Հարկադիր տարաբնակեցում

Տեղաբնիկներ

Հաղորդակցություն շահակիցների հետ, նրանց մասնակցությունն ու խորհրդատվությունը

Ծրագրի նախագծման ընթացքում

Ծրագրի իրականացման ընթացքում

Պատասխանատու աշխատակազմ

Պատասխանատու ԱԶԲ
աշխատակից

Նիազի Թարիք Հ.

Պատասխանատու ԱԶԲ վարչություն	Կենտրոնական և Արևմտյան Ասիայի վարչություն
Պատասխանատու ԱԶԲ բաժին	Հանրային կառավարման, Ֆինանսական ոլորտի և առևտրի բաժին, ԿԱԱՎ
Իրականացնող գերատեսչություն	Ֆինանսների նախարարություն (ՖՆ) Մելիք Ադամյան 1, Երևան Հայաստան

Ժամանակացույց

Հայեցակարգի ընդունում	27 հունիս, 2017թ.
Փաստերի հավաքում	28 հունիս, 2017թ. - 07 հուլիս, 2017թ.
Տնօրինության կողմից վերանայում	24 օգոստոս, 2017թ.
Հաստատում	-
Վերջին վերանայման առաքելություն	-
Ծրագրի տեղեկատվական թերթիկի վերջին թարմացումը	28 հունիս, 2017թ.

Ծրագրի տեղեկատվական թերթիկը (ՄՏԹ) ամփոփ տեղեկատվություն է պարունակում նախագծի կամ ծրագրի վերաբերյալ: Քանի որ ՄՏԹ-ն աշխատանքային փաստաթուղթ է, դրա սկզբնական տարբերակում գուցե ներառված չլինեն որոշ տեղեկություններ, սակայն նոր տեղեկությունների ի հայտ գալուն գուցահեռ դրանք նույնպես կներառվեն փաստաթղթում: Առաջարկվող ծրագրի մասին տեղեկությունները նախնական և ուղղորդող բնույթ ունեն:

ԱԶԲ-ն ծրագրի տեղեկատվական թերթիկում (ՄՏԹ) պարունակվող տեղեկատվությունը տրամադրում է բացառապես որպես դրանից օգտվողների համար ռեսուրս, առանց որևէ երաշխավորության: Թեև ԱԶԲ-ն փորձում է ապահովել բովանդակության բարձր որակը, այդ տեղեկատվությունը տրամադրվում է «ինչպես կա», առանց որևէ բացահայտ կամ ենթադրվող երաշխավորությունների, ներառյալ՝ առանց սահմանափակումների երաշխավորությունները առևտրային օգուտների, կոնկրետ նպատակի համար պիտանիության և խախտման բացառման վերաբերյալ: ԱԶԲ-ն, մասնավորապես, չի երաշխավորում այդպիսի տեղեկատվության ճշգրտությունը կամ ամբողջականությունը: